ՀՀ գիտության կոմիտեի 2022 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն

Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում

- Մշակվել 2022 թ. դեկտեմբերին հանրային քննարկման է ներկայացվել *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը*: Նախագծի նպատակը գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումն ու գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն է: Նախագծով հստակեցվում են ոլորտի քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմինների լիազորությունները և իրավասությունները, առաջարկվում է ներմուծել մի քանի նոր հասկացություններ և մի շարք հասկացություններ հստակեցնել: Մասնավորապես՝ առաջարկվում է լրացնել «ճարտարագիտատեխնիկական աշխատող», «գիտամանկավարժական բնագավառի աշխատող» և «գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ» հիմնական հասկացությունները:
    - Հանրային քննարկման է ներկայացվել «ՀՀ գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թ. հոկտեմբերի 3-ի N 935 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
    - Հանրային քննարկման է ներկայացվել «Գիտական աստիճանի համար ամենամսյա դրամական վճարի տրամադրման կարգը և չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
    - Հունվարին հաստատվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու նոր կարգ:
    - Փետրվարին հաստատվել է Գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման նոր կարգ:

Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում

- Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-

2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի՝ 2022 թվականին իրականացվել է ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացը: Հունվարի 1-ից գիտական կադրերի պաշտոնային դրույքաչափի նվազագույն արժեքի հաշվարկի համար բազային աշխատավարձ սահմանվել է 66 140 դրամը, և յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն արժեքը սահմանվել է.

1. *լաբորանտ կամ ճարտարագետ*՝ 2021 թ.-67.3 հազ. դրամ, 2022թ.-102.5 հազ. դրամ,
2. *ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ*՝ 2021 թ.-76.0 հազ. դրամ, 2022թ.-110.0 հազ. դրամ,
3. *կրտսեր գիտաշխատող*՝ 2021թ.-85.8 հազ. դրամ, 2022թ.-120.0 հազ. դրամ,
4. *գիտաշխատող*՝ 2021թ.-90.4 հազ. դրամ, 2022թ.-150.0 հազ. դրամ,
5. *ավագ գիտաշխատող*՝ 2021թ.-99.0 հազ. դրամ, 2022թ.-200.0 հազ. դրամ,
6. *առաջատար գիտաշխատող*՝ 2021թ.-114.3 հազ. դրամ, 2022թ.-250.0 հազ. դրամ,
7. *գլխավոր գիտաշխատող*՝ 2021թ.-138.1 հազ. դրամ, 2022թ.-367.1 հազ. դրամ,
8. *գիտական խմբի ղեկավար*՝ 2021թ.-129.1 հազ. դրամ, 2022թ.-230.0 հազ. դրամ,
9. *գիտական ստորաբաժանման ղեկավար*՝ 2021թ.-141.4 հազ. դրամ, 2022թ.-350.0 հազ. դրամ:

- **Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում.** Սկսել է գործել առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն, արդյունավետության մշտադիտարկման համար կայք (https://orgs.scs.am/): Կայքի միջոցով ընդունվել են գիտական կազմակերպությունների 2021 թվականի տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև 2023 թվականի պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հայտերը: Համակարգի շնորհիվ ստեղծվում է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ լիարժեք բազա, որը հիմք է հանդիսանալու դրանց գործունեության արդյունավետության գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում իրականացնելու համար: Պետական բյուջեից ֆինանսավորվող յուրաքանչյուր գիտական կազմակերպություն ունի անհատական էջ, որտեղ լրացվում են գիտական և վարչական կառուցվածքի և աշխատակիցների վերաբերյալ տվյալները: Անհատական էջում կա գիտական ենթակառուցվածքների (լաբորատորիա, բաժին, խումբ) նկարագրություն, գիտական ուղղություններ և նպատակներ: Բացի անձնակազմից նախատեսվում է

հավաքագրել գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի (սարքեր, սարքավորումներ, նյութեր), ինչպես նաև անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ:

Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում,

- 2022 թվականին Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի արդյունքում 15 գիտական կազմակերպությունների տրամադրվել է 2 միլիարդ 933 միլիոն դրամ (ֆինանսավորվել է 28 հայտ): Դա գրեթե այնքան է, որքան նույն նպատակով կազմակերպված նախորդ բոլոր մրցույթների արդյունքում տրամադրված գումարները միասին վերցրած՝

Թվականը	Գիտության կոմիտեից տրամադրված գումարը (հազար ՀՀ դրամ)
2013	289,133.00
2014	260,700.00
2015	298,667.80
2019	437,832.80
2020	358,726.00
2021	1,354,297.30
2022	2,932,527.00
Ընդամենը՝	5,931,883.90

Մրցույթով ձեռք բերված սարքավորումները տեղակայվելու են այն կազմակերպություններում, որոնք ներկայացրել են մրցութային հայտը, սակայն, մրցույթի պայմանների համաձայն, դրանցից օգտվելու հնարավորություն կունենան նաև այլ շահագրգիռ կազմակերպություններ:

Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում

2022 թ. հայտարարվել են մի շարք մրցույթներ՝ ուղղված գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացմանն ու երիտասարդ կադրերի ներգրավմանը:

- Առաջին անգամ կազմակերպվել է «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» միջազգային մրցույթ, որի արդյունքում 2022 թ. հոկտեմբեր ամսից ֆինանսավորման են երաշխավորվել արտերկրից Հայաստան տեղափոխված 5 գիտնականների թեմաներ՝ 60 ամիս տևողությամբ և

յուրաքանչյուրը մինչև 175 միլիոն ՀՀ դրամ ֆինանսավորմամբ: 2022-ի դեկտեմբերին մրցույթը հայտարարվել է երկրորդ անգամ:

- Առաջին անգամ կազմակերպվել է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» (ARPI) մրցույթ: Մրցույթին ներկայացվել է 52 հայտ 14 երկրներից, ֆինանսավորման են երաշխավորվել 11 երկրներից 18 գիտնականների ներկայացրած թեմաներ: Մրցույթի շահառուները արտերկրում բնակվող բարձր վարկանիշ ունեցող գիտնականներ են, որոնք ստեղծել և հեռավար կարգով ղեկավարում են նոր հետազոտական խմբեր ՀՀ գիտական կազմակերպություններում: Յուրաքանչյուր ծրագրին 5 տարվա համար հատկացվում է մինչև 152.5 միլիոն ՀՀ դրամ, որի որոշակի մասն ուղղվում է լաբորատոր միջավայրի բարեկարգմանը:
- Տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով կազմակերպվել է Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ՝ 12 կամ 24 ամիս տևողությամբ: Մրցույթի շրջանակներում ներկայացվել է 34 հայտ: Մրցույթի ամփոփումն ու ֆինանսավորումը նախատեսված է 2023 թվականին:
- Կազմակերպվել է Փորձարարական մշակումների նախագծերի (Experimental development projects) հայտերի ընտրության մրցույթ որը փոխարինել է նախորդ տարիներին ՀՀ գիտության կոմիտեի կազմակերպած Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթներին՝ այն հիմնական տարբերությամբ, որ նախագծերը ավարտին պետք է ունենան որոշակի տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակ (ՏՊՄ, TRL): Մրցույթի շրջանակներում ներկայացվել է 11 հայտ: Մրցույթի ամփոփումն ու ֆինանսավորումը նախատեսված է 2023 թվականին:
- Կազմակերպվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթ: Ֆինանսավորման են երաշխավորվել ասպիրանտների և հայցորդների 26 հետազոտական ծրագրեր:
- Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրի շրջանակում ստացված 44 հայտերից ֆինանսավորման է երաշխավորվել 35-ը:
- Հայտարարվել է Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ: Մրցույթն իրականացվել է երկու փուլով՝

- երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc) ծրագիր՝ յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 12 երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc) կազմակերպում աշխարհի լավագույն գիտական կազմակերպություններում:

- նպատակային ասպիրանտական ուսուցման (PHD abroad) ծրագիր՝ յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 24 ասպիրանտների (PHD) նպատակային ուսուցման կազմակերպում աշխարհի

լավագույն գիտական կազմակերպություններում: Մրցույթի ամփոփումն ու ֆինանսավորումը նախատեսված է 2023 թվականին:

Նախորդ տարի Գիտության կոմիտեի կողմից կազմակերպված և տարվա ընթացքում ամփոփված չորս մրցույթների արդյունքում ֆինանսավորվել է 86 ծրագիր, որոնցում ներգրավված 286 անձից 211-ը երիտասարդներ են (73.7%, մինչև 35 տարեկան): Ծրագրերից 69-ի (80.2%) ղեկավարները երիտասարդ գիտնականներ են: Առաջին անգամ իրականացված Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագրի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 18 գիտնականների գիտնականներից 9-ը հայազգի չեն, իսկ մրցույթի արդյունքում ՀՀ-ում հիմնադրվող ստորաբաժանումների ղեկավարներից 9-ը կանայք են): ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագրի արդյունքում 2022 թ. Հայաստան տեղափոխված գիտնականներից մեկը հայազգի չէ:

Միջազգային համագործակցություն

- Հոկտեմբերին ՀՀ գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի միջև ստորագրվել է «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» մտադրությունների հուշագիր: Հուշագրի նպատակն է ձևավորել և ամրապնդել Հայաստանի և Վրաստանի գիտնականների և գիտահետազոտական խմբերի միջև համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում: Համագործակցության շրջանակներում 2023 թվականին նախատեսվում է հայտարարել հայ-վրացական մրցույթ:
- Ապրիլին ՀՀ գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի միջև ստորագրվել է «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» մտադրությունների հուշագիր, որի շրջանակներում կազմակերպվել է հայ-իտալական համատեղ թեմաների աջակցության **«**ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ - ԻՀ ԱՀԽ - 2023» մրցույթ: Մրցույթի շրջանակներում տրամադրվելու են 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ՝ մինչև 10 անձից բաղկացած գիտական խմբերի: Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալը կազմում է 2 միլիոն 500 հազար ՀՀ դրամ,
- Աշխատանքներ են տարվել ՀՀ գիտության կոմիտեի և Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) միջև համագործակցությունը վերսկսելու և համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ,
- Մայիսին ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և ՉԺՀ բնական պաշարների նախարարության երկրի արբանյակային հեռազննման

կիրառության կենտրոնի միջև ստորագրվել է «Արբանյակային պատկերների կիրառման ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: Հուշագրի նպատակը երկրի արբանյակային հեռազննման տվյալների և տեխնոլոգիաների կիրառման ոլորտում հայ-չինական գիտական համագործակցության զարգացումն է:

- Նոյեմբերին ՀՀ գիտության կոմիտեի և գիտատեխնիկական տեղեկատվության և վերլուծության «Elsevier» հրատարակչական ընկերության միջև ստորագրվել է «Reaxys Base» և «Reaxys Medical Chemistry» շտեմարաններին բաժանորդագրության մասին համաձայնագիր, ըստ որի՝ Հայաստանի գիտնականները մինչև 2025 թ. հոկտեմբերի 7-ը հնարավորություն ունեն օգտվելու քիմիայի ոլորտի հանրահայտ շտեմարաններից:
- 2022 թ. փետրվարի 11-ից ուժի մեջ է մտել 2021 թ. նոյեմբերի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը:
- «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամի և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հիմնադրամի կողմից ընտրվել են 9 գիտական նախագծեր, որոնցից 5-ը ներկայացվել են «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթներին՝ 2-ը դարձել են «Հորիզոն Եվրոպա» «Marie Skłodowska-Curie» ծրագրի շահառուներ: «Հորիզոն Եվրոպա» ծրագրի 5 պոտենցիալ հայտատուներ ստացել են միջազգային փորձագետների կողմից անցկացվող 4-ամսյա տևողությամբ ուսուցողական նիստերի և անհատական խորհրդատվությունների մասնակցության հնարավորություն,
- «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում 2021-2022 թվականների ընթացքում ՀՀ պատկանող կազմակերպությունների կողմից ներգրավվել են 2,729,236.25 եվրո դրամաշնորհային միջոցներ այն դեպքում, երբ նախորդ «Հորիզոն 2020» ծրագրի ողջ տևողության ընթացքում 2014-2020 թվականների ընթացքում ՀՀ պատկանող կազմակերպությունները ներգրավել են ընդամենը 4,196,514.36 եվրո դրամաշնորհային միջոցներ:
- 2022 թվականի նոյեմբերի 10-ին Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության (COST ասոցիացիա) բարձրագույն խորհուրդը Հայաստանին շնորհել է COST ասոցիացիայի լիիրավ անդամի կարգավիճակ, ինչը նշանակում է, որ հայաստանյան գիտնականները և նորարարները կարող են լինել COST գործողության հիմնական նախաձեռնող և համակարգող, ի հավելումն արդեն իսկ սկսված COST գործողություններին անդամակցելուն, ինչպես որ նախկինում էր: COST գործողությունները միջառարկայական գիտահետազոտական ցանցեր են, որոնք միավորում են հետազոտողներին և նորարարներին՝ 4 տարվա ընթացքում իրենց նախընտրած թեման ուսումնասիրելու

նպատակով: 2022 թ. տարեվերջի դրությամբ ընդհանուր թվով 44 հայաստանյան մասնակիցներ մասնակցել են 29 ընթացիկ COST գործողությունների:

- Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոնը գործարկել է կայք՝ գիտության և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:
- Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ EU TAIEX ծրագրով ՀՀ գիտության կոմիտեի երեք աշխատակիցների՝ Էստոնիայի Գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի համապատասխան աշխատակիցների հետ փորձի փոխանակման նպատակով համագործակցության համար:
- Տրամադրվել են կարծիքներ ԵԱՏՄ շրջանակներում մշակված և ընդունված հայեցակարգերի նախագծերի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծառայությունների ոլորտում համատեղ գործունեության ու վարչական համագործակցության մասին համաձայնագրերի և այլ իրավական ակտերի վերաբերյալ: Տրամադրվել են կարծիքներ ԱՊՀ շրջանակներում մշակվող փաստաթղթերի վերաբերյալ:

Ընթացիկ գործունեություն

- Կազմակերպվել է Արցախի գիտական կենտրոնից ներկայացված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների 2022 թ. թվով 4 հայտերի գիտական փորձաքննությունը, որի արդյունքները տրամադրվել են Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարին:
- Կազմակերպվել է 2021-2022 թթ. հայտարարված մրցույթների հայտերի առցանց հավաքագրումը, գիտաչափական վերլուծությունը և գիտական արդյունքների նույնականացումը: Իրականացվել է 249 հայտի գիտական փորձաքննություն:
- Իրականացվել է 2021 թ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված 82 կազմակերպությունների և բուհերի աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան, որը 2022 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 5442 գիտական և վարչական աշխատակիցների մասին տվյալներ: Գրանցված գիտաշխատողների թիվը 3685 է, որից դոկտորի գիտական աստիճան ունեն 530-ը, իսկ թեկնածուի գիտական աստիճան՝ 1752-ը, վարչական աշխատակիցների թիվը 1757 է:
- Ստեղծվել և վարվել է 2022 թ. գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարան, որը 2022 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 517 դոկտորի և 1577 թեկնածուի մասին տվյալներ:

- Տարվա ընթացքում ֆինանսավորվել է 11 գիտական միջոցառում և երիտասարդ գիտնականների 4 դպրոց:
- 2022-ին կոմիտեի աջակցությամբ կազմակերպվել է 15 կոլոքվիում, որոնց նպատակն էր տարբեր գիտական կենտրոններում աշխատող նույն ոլորտի մասնագետների միջև համագործակցության խթանումը, ֆիզիկայի և կենսաբանության ոլորտներում առկա խնդիրների քննարկումը, և երիտասարդ կադրերի ներգրավումը:
- Կոմիտեն մասնակցել է սեպտեմբերին Հայաստանում կայացած գիտության ու արվեստի միջազգային «STARMUS VI» փառատոնի կազմակերպման աշխատանքներին: Հայաստանում փառատոնն անցկացվում է «STARMUS VI. 50 տարի Մարսի վրա» խորագրով և նվիրված է Մարսի վրա «Մարս 3» տիեզերակայանի առաջին վայրէջքի 50-ամյակին:
- Սեպտեմբերի 19-23-ը Ծաղկաձոր քաղաքում տեղի է ունեցել «Մաթեմատիկական անալիզ և դիֆերենցիալ հավասարումներ» թեմայով միջազգային գիտաժողովը: Հայաստանի կողմից զեկուցումներով հանդես է եկել 25, իսկ արտերկրներից՝ 43 գիտնական: Գիտաժողովին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նաև Գիտության կոմիտեն:
- Կազմակերպվել է մարտի 26-ին ԵՊՀ-ում տեղի ունեցած Հայկական համադպրոցական գիտության երրորդ փառատոնը:
- Կազմակերպվել է Կոմիտեում քաղաքացիների ընդունելությունը (79 քաղաքացի, այդ թվում 54-ը՝ նախագահի, 25-ը՝ նախագահի տեղակալի մոտ): Քաղաքացիներից ստացվել է 59 դիմում, բողոք և առաջարկություն, բոլորին տրվել է պարզաբանում:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նպատակով մրցույթների կազմակերպում

(2023 թ. փետրվարի դրությամբ)

Մրցույթը	Հայտա-րարման ժամկետը	Ներկա-յացված հայտերի քանակը	Ֆինանսա-վորման երաշխա-վորված թեմաների/ ծրագրերի թիվը	
2021 թ. հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփում				
Մրցույթ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար	2021 թ. դեկտեմբեր	1	1	Մրցույթի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» մրցույթ	2021 թ. հուլիս	10	Ամփոփված չէ	Մրցույթի արդյունքների ամփոփումը գերմանական կողմի խնդրանքով կկատարվի 2023 թ.ընթացքում, ֆինանսավորումը կսկսվի 2024 թ.-ից:
2022 թ. կազմակերպված մրցույթներ				
Միջազգային մրցույթներ				
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և ԻՀ ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2022» մրցույթ	2022 թ. ապրիլ	14	**8**	Հայտերը փորձաքննության փուլում են: Նախատեսվում է ընտրել մինչև 10 հայտ, ֆինանսավորումը նախատեսվում է սկսել 2023 թ. փետրվարից
Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր	2022 թ. հունիս	10	5	Ֆինանսավորումը տրամադրվում է 2022 թ. հոկտեմբերից՝ 60 ամիս տևողությամբ
Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր	2022 թ. հունիս	52	18	Ֆինանսավորումն սկսվել է 2022 թ. դեկտեմբերից՝ 60 ամիս տևողությամբ: Յուրաքանչյուր խմբի նախատեսվում է տրամադրել մինչև 152,5 միլիոն ՀՀ դրամ:

«Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023» մրցույթ	2022 թ. դեկտեմբեր			Հայտերն ընդունվում են: Մրցույթը հայտարարվել է երկրորդ անգամ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2023 թ. փետրվարի 24-ն է:
Ներպետական մրցույթներ				
«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթ	2022 թ. ապրիլ	31	26	Ֆինանսավորումն սկսվել է 2022 թ. հոկտեմբերից
Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթ	2022 թ. հունիս	82	28	15 գիտական կազմակերպությունից ներկայացված 28 հայտերով տրամադրվել է 2 միլիարդ 933 միլիոն ՀՀ դրամ:
Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022	2022 թ. հուլիս	44	35	Ֆինանսավորումն սկսվել է 2022 թ. հոկտեմբերից
Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավեր	2022 թ. սեպտեմբեր	34		Հայտերը փորձաքննության փուլում են:
Փորձարարական մշակումների նախագծերի (Experimental Development Projects) հայտերի ընտրության մրցույթի հրավեր	2022 թ. հոկտեմբեր	11		Հայտերը փորձաքննության փուլում են:
Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ	2022 թ. նոյեմբեր			Հայտերն ընդունվում են
Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի հրավեր	2022 թ. դեկտեմբեր			Հայտերն ընդունվում են
ՀՀ 2022 թ. պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառման իրականացման համար հայտարարվում է կազմակերպության ընտրության մրցույթ:	2022 թ. փետրվար	1	1	Մրցույթի արդյունքում ընտրվել է կազմակերպություն, որը մրցութային հիմունքներով երիտասարդ շահառուներին տրամադրել է ֆինանսական աջակցություն տարբեր ուղղություններով